

5.4. 2011թ. փետրվար ամսվա շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մոնիթորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության շրջակա բնական միջավայրը 2011թ. փետրվարին ունեցել է հետևյալ բնութագիրը.

Օդային ավազանի որակի մոնիթորինգ: Փետրվարին հանրապետության մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգ իրականացվել է Արարատ, Գյումրի և Հրազդան քաղաքներում տեղակայված 3 մշտական լաբորատոր դիտակայանների, Երևան, Ալավերդի, Վանաձոր, Գյումրի, Հրազդան, Ծաղկաձոր, Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքներում տեղակայված պասիվ նմուշառման 148 դիտակետերի, Երևան քաղաքում տեղակայված 4, Ալավերդի, Ծաղկաձոր քաղաքներում և Ամբերդ գյուղում տեղակայված 1-ական ավտոմատ կայանների միջոցով: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 29076 փորձանմուշ:

Մթնոլորտի աղտոտվածության որակի մոնիթորինգի անցկացման համար տեղակայված դիտակայանների, դիտակետերի, ավտոմատ կայանների և վերցված փորձանմուշների քանակական բաշխվածությունն ըստ քաղաքների և Ամբերդ գյուղի, 2011թ. փետրվար

(միավոր)

	Դիտակայանների		Դիտակետերի		Ավտոմատ կայանների	
	քանակը	փորձանմուշների քանակը	քանակը	փորձանմուշների քանակը	քանակը	փորձանմուշների քանակը
ք.Երևան	-	-	18	99	4	18532
ք.Արարատ	1	24	-	-	-	-
ք.Ալավերդի	-	-	18	144	1	6362
ք.Վանաձոր	-	-	24	143	-	-
ք.Գյումրի	1	24	24	189	-	-
ք.Հրազդան	1	72	12	72	-	-
ք.Ծաղկաձոր	-	-	14	84	1	2912
ք.Վաղարշապատ	-	-	16	96	-	-
ք.Աբովյան	-	-	12	96	-	-
ք.Սևան	-	-	10	38	-	-
գ.Ամբերդ	-	-	-	-	1	189
Ընդամենը	3	120	148	961	7	27995

Երևան քաղաքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ավտոմատ կայանների միջոցով որոշվել են ածխածնի մոնօքսիդի, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 15366, ծծմբի երկօքսիդի համար` 1021, ազոտի օքսիդների համար` 1470, գետնամերձ օզոնի համար` 675 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքերի տվյալների, ավտոմատ կայանների հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.2 անգամ, իսկ ազոտի օքսիդինը` 1.5 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.9 անգամ: Հունվար ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել: Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի

երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 5.5 անգամ, իսկ միանվագ առավելագույն կոնցենտրացիան՝ 4.7 անգամ: Հունվար ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.5 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ալավերդի քաղաքի ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 4468, ծծմբի երկօքսիդի համար՝ 1894 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 4.6 անգամ: Քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից բարձր է եղել 1.4 անգամ, իսկ ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելի նորմայի սահմանում:

Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն գերազանցել է 1.8 անգամ: Հունվար ամսվա համեմատ ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.6 անգամ:

Ծաղկաձոր քաղաքի պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում: Ավտոմատ սարքի միջոցով ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշման համար կատարվել է օդի 2128, ազոտի օքսիդների համար՝ 784 դիտարկում: Ըստ ավտոմատ սարքի տվյալների, ավտոմատ կայանի հարակից տարածքի մթնոլորտային օդի փորձանմուշներում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Վանաձոր, Վաղարշապատ, Աբովյան և Սևան քաղաքների պասիվ նմուշառման դիտակետերի միջոցով վերցված մթնոլորտային օդի փորձանմուշներում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:

Ամբերդ գյուղում ֆոնային կոնցենտրացիաների որոշման նպատակով ավտոմատ եղանակով վերցվել է օդի 28 փորձանմուշ: Օդի փորձանմուշներում որոշվել է ազոտի երկօքսիդի պարունակությունը: Մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի որոշման համար անընդմեջ ռեժիմով կատարվել է 161 դիտարկում: Գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ից բարձր է եղել 3.2 անգամ, իսկ ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելի նորմայի սահմանում:

Սակերևութային ջրերի որակի մոնիթորինգ: Փետրվարին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 20 գետերի, Երևանյան և Սևանա լճերի 56 դիտակետերում: Վերցված 65 փորձանմուշներում որոշվել է 20-42-ական ցուցանիշ:

Մակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը, 2011թ. փետրվար

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները														
			ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ ³)	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգN/դմ ³)	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգN/դմ ³)	սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/դմ ³)	մագնեզիում (ՍԹԿ՝ 40.0 մգ/դմ ³)	ալյումին (ՍԹԿ՝ 0.04 մգ/դմ ³)	վանադիում (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	քրոմ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	մանգան (ՍԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	պղինձ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	ցինկ (ՍԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	բրոմ (ՍԹԿ՝ 0.2 մգ/դմ ³)	սելեն (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	կադմիում (ՍԹԿ՝ 0.005 մգ/դմ ³)	
Փամբակ	2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	4.4	-	-	-	-	-	0.004	-	-	0.002	-	-	0.003	-	
	3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	4.3	-	-	-	-	-	0.073	0.003	-	0.018	0.003	-	-	0.002	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	5.7	0.041	6.278	-	-	-	0.091	0.004	-	0.029	0.005	-	-	0.004	-
Դեբեդ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	5.2	0.033	-	-	-	-	0.118	0.006	-	-	0.004	-	-	0.003	-
	6	ք.Այրումից 0.5 կմ վերև	4.6	0.040	-	-	-	-	0.134	0.005	-	0.020	0.014	-	-	0.004	-
	7	ՀՀ պետական սահմանի մոտ	4.5	0.042	-	-	-	-	0.151	0.004	-	0.018	0.013	-	-	0.003	-
Ձորագետ	8	ք.Ստեփանավանից 0.5 կմ վերև	5.3	-	-	-	-	-	-	0.007	-	-	-	-	-	0.002	-
	10	Գետաբերան	4.8	-	-	-	-	-	0.062	0.005	0.002	-	0.003	-	-	-	-
Մարցիգետ	13	Գետաբերան	4.5	-	-	-	-	-	0.352	0.002	-	-	0.005	-	-	0.004	-
Ախթալա	14	Գետաբերան	3.3	-	0.909	396.8	-	-	0.409	-	-	0.648	0.210	2.083	-	0.002	0.022
Աղստև	15	ք.Դիլիջանից 1.2 կմ վերև	3.6	0.049	-	-	-	-	-	-	-	0.031	-	-	-	-	-
	16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	5.2	-	-	-	-	-	0.075	0.002	-	0.029	0.003	-	-	-	-
	17	ք.Իջևանից 1 կմ վերև	4.0	-	-	-	-	-	-	-	-	0.020	-	-	-	-	-
	18	ՀՀ պետական սահմանի մոտ	3.9	-	0.540	-	-	-	0.334	0.002	-	-	0.002	-	-	0.002	-
Գետիկ	20	Գետաբերան	5.6	-	-	-	-	-	0.072	0.002	-	-	-	-	-	-	-
Արաքս	29	ք.Ագարակից 2 կմ հարավ	5.6	0.036	0.517	181.9	56.6	0.066	0.015	0.009	-	0.004	-	0.408	0.003	-	-
	30	ք.Ագարակից 2.5 կմ հարավ-արևելք	5.0	0.037	0.511	183.9	55.8	0.072	0.016	0.010	-	0.004	-	0.409	0.003	-	-
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	-	0.063	0.653	249.7	60.0	-	0.020	0.009	0.022	0.003	-	0.405	0.004	-	-
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	0.077	0.659	235.4	58.5	0.058	0.019	0.009	0.041	0.005	-	0.385	0.004	-	-
	42	Ռանչյաք գյուղից 0.5 կմ ներքև	-	0.058	0.540	196.5	60.2	0.046	0.016	0.009	0.054	0.003	-	0.376	0.003	-	-
Քասախ	47	Գետաբերան	4.0	0.038	-	-	-	-	0.014	0.004	-	-	-	-	-	-	-
Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	4.6	-	0.682	-	-	-	0.011	0.002	0.046	0.003	-	-	-	-	-
	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	3.8	-	-	-	-	-	0.018	0.004	-	0.003	-	0.336	0.002	-	-
	54	Արզնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	5.11	0.060	1.006	-	48.8	-	0.026	0.021	0.026	0.003	-	0.968	0.003	-	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	6.3	0.094	7.727	-	-	-	0.079	0.023	0.013	0.040	0.005	-	0.350	0.002	-
	56	Գետաբերան	3.5	0.066	4.744	-	-	-	0.060	0.020	0.009	0.044	0.003	-	0.275	0.002	-
Մարմարիկ	58	Գետաբերան	4.9	-	2.330	-	-	-	0.002	0.004	0.042	0.002	-	-	-	-	-
Գետառ	59	Գետաբերան	4.8	0.138	6.619	-	-	-	0.078	0.024	0.016	-	0.006	0.037	-	0.007	-
Արվա	84	ք.Վալբից 0.5 կմ վերև	-	-	-	-	-	-	0.005	-	0.032	-	-	-	-	-	-

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները														
			ԹԿՊՆ (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ ³)	նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգ/դմ ³)	ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգ/դմ ³)	սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/դմ ³)	մագնեզիում (ՍԹԿ՝ 40.0 մգ/դմ ³)	ալյումին (ՍԹԿ՝ 0.04 մգ/դմ ³)	վանադիում (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	քրոմ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	մանգան (ՍԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	պղինձ (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	ցինկ (ՍԹԿ՝ 0.01 մգ/դմ ³)	բրոմ (ՍԹԿ՝ 0.2 մգ/դմ ³)	սելեն (ՍԹԿ՝ 0.001 մգ/դմ ³)	կադմիում (ՍԹԿ՝ 0.005 մգ/դմ ³)	
Մեղրիգետ	89	ք.Մեղրիից 0.5 կմ վերև	4.8	-	-	-	-	-	-	-	-	0.002	-	-	-	-	
	90	Գետաբերան	4.7	-	0.455	-	-	-	-	-	-	0.005	-	-	-	-	
Ողջի	92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	4.3	0.057	18.409	-	-	-	-	-	0.002	0.030	0.006	-	-	-	
	93	ք.Կապանից 0.8 կմ վերև	3.6	-	0.625	-	-	-	-	-	-	0.005	-	-	0.004	-	
	94	ք.Կապանից 6.8 կմ ներքև	4.4	0.081	0.642	403.5	-	0.204	0.002	-	0.247	0.181	0.164	-	0.003	-	
Արծվանիկ	96	Գետաբերան	6.9	0.107	-	681.5	-	0.050	0.006	-	0.109	0.008	0.091	-	0.006	-	
Գեղի	98	Գետաբերան	3.7	-	-	-	-	-	-	-	0.018	0.004	-	-	-	-	
Որոտան	102	Տաթև ՀԷԿ գյուղից 0.5 կմ ներքև	4.9	-	-	-	-	0.077	0.010	-	-	0.002	-	-	-	-	
Գորիսգետ	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	7.9	0.106	-	-	-	-	0.021	0.002	-	0.009	-	-	-	-	
Երևանյան լիճ	112	Ամբարտակի մոտ	3.6	0.043	0.591	-	-	-	0.024	0.013	0.024	0.004	-	0.329	0.002	-	
Սևանա լիճ	116	Թերակղզուց 70 ⁰ ազիմուտով	3.4	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	
	117	Ձկնագետի գետաբերանի շրջանում															
		մակերևույթից	3.5	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
		20 մ խորքից	3.8	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	118	Շորժա գյուղից 0.5 կմ հարավ-արևմուտք	3.9	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	
	120	Արտանիշ գյուղից 2 կմ 135 ⁰ ազիմուտով															
		մակերևույթից	3.6	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
		20 մ խորքից	3.3	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	122	Փամբակ գուղից 2.2 կմ 255 ⁰ ազիմուտով, մակերևույթից	3.8	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	124	Մասրիկ գետի գետաբերանի շրջանում	3.6	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	125	Կարճաղբյուր գետի գետաբերանի շրջանում	3.9	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	126	Արփա-Սևան ջրատարի ելքի մոտ	3.3	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
	127	Մարտունի գետի գետաբերանի շրջանում	3.9	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
128	Երանոս գուղից 15 կմ 90 ⁰ ազիմուտով, մակերևույթից	3.6	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	
129	Երանոս գուղից 24 կմ 90 ⁰ ազիմուտով, 20 մ խորքից	3.8	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	
130	Նորատուս գյուղից 7 կմ հյուսիս-արևմուտք	3.6	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	